ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

12.03.2021 թ. ք. Իջևան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցել են Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Պ. Ասիլբեկյան, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Ա. Եզանյանը, ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահ Ի. Վարդանյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Ա. Խոջումյանը, Ա. Ղարախանյանը: Նիստը անց է կացվել zoom.us հարթակում, գիտական խորհրդի նախագահն է Գ. Ավետիսյանը, քարտուղարը՝ Ա. Ալեքսանյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Գ. Ավետիսյանը:

Օրակարգ

1. 2020-21թթ. ուստարվա I կիսամյակի քննաշրջանի ամփոփում/ լուծարքային շրջանի ամփոփում/ /Զեկ. Գ. Ավետիսյան/:
2. Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքների ներկայացում և առաջարկների քննարկում /Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:
3. Հաղորդում ամբիոններում II կիսամյակի դասընթացների փաթեթների առկայության և վերանայման ընթացքի մասին /Զեկ. Մ. Միքայելյան,Գ. Հովհաննիսյան/:
4. Ֆակուլտետի 2021-2025 և 2021-2026 ուստարիների ուսումնական պլանների հաստատում /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
5. Հաղորդում ավարտական կուրսերի քննաշրջանի կազմակերպման վերաբերյալ և քննաշրջանի գրաֆիկի հաստատում / Զեկ. Գ. Ավետիսյան/:
6. Հաղորդում II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին / Զեկ. Գ. Ավետիսյան/:
7. Ընթացիկ հարցեր.

   7.1. Ֆակուլտետի «Ընդհանուր տնտեսագիտություն» ու «Տուրիզմի կառավարում և մշակութաբանություն» ամբիոնների 2020-2021ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանների հաստատում/Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:

7.2. «Ֆինանսներ» /ըստ ոլորտի/ և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի ղեկավարների 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանների հաստատում / Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/։

Բաց քվեարկությամբ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում՝ 6/1

¬ Հաստատել նիստի օրակարգը։

1. Լսեցին. - 2020-21թթ. ուստարվա I կիսամյակի քննաշրջանի ամփոփման/ լուծարքային շրջանի ամփոփման/ մասին /Զեկ. Գ. Ավետիսյան/։

Դեկանի պաշտոնակատարը հաղորդեց, որ տնտեսագիտության ֆակուլտետում 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանին մասնակցել է 118 ուսանող։ «Ֆինանսներ» կրթական ծրագրով 75 ուսանող, «Զբոսաշրջություն» կրթական ծրագրով 43 ուսանող։ Քննաշրջանը հաղթահարել է 95 ուսանող, 16 ուսանող ստացել են գերազանց գնահատականներ /«Ֆինանսներ» ԿԾ 8, «Զբոսաշրջություն» ԿԾ 8 ուսանող/։ Ֆակուլտետում բացարձակ առաջադիմությունը կազմել է 80,51%/ Զբոսաշրջություն 81,4%, Ֆինանսներ 80,00%/։ Անբավարար գնահատականներ ստացել են 23 ուսանող /«Ֆինանսներ» ԿԾ 15, «Զբոսաշրջություն» ԿԾ 8 ուսանող/։ Անվճար ուսուցման համակարգով սովորում է 35 ուսանող /«Ֆինանսներ» ԿԾ 21, «Զբոսաշրջություն» ԿԾ 14 ուսանող/, բացարձակ առաջադիմությունը կազմում է 100%։ Վճարովի ուսուցման համակարգով սովորում է 83 ուսանող /«Ֆինանսներ» ԿԾ 54, «Զբոսաշրջություն» ԿԾ 29 ուսանող/, քննաշրջանը հաղթահարել է 60 ուսանող, բացարձակ առաջադիմությունը կազմում է 72,29%։

Քննաշրջանը կազմակերպվել է սահմանված ժամկետներում, որոշ դասընթացներ հեռավար, իսկ որոշ դասընթացներ լսարանային տարբերակներով։ Հեռավար քննությունները տեսաձայնագրվել են։ Գրավոր բողոքներ չկան։ Կիսամյակի ընթացքում սահմանվել էին 3 ընթացիկ քննություններ և ստուգումներ, որի արդյունքում որոշ դասընթացներ գնահատվեցին միանգամից 20 միավորով և իրականացվեցին քննաշրջանի ընթացքում։

Լուծարքային շրջանը կազմակերպվել է սահմանված ժամկետներում, որի արդունքում մեկ ուսանող կուտակել է մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտք՝ «Մաթեմատիկական անալիզ-3» /8 կրեդիտ/ դասընթացից։

Արտահայտվեցին. - Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը

Ղեկավարվելով ԵՊՀ հիմանդրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24. 11 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - 2020-21թթ. ուստարվա I կիսամյակի քննաշրջանի և լուծարքային շրջանի արդյունքները ընդունել ի գիտություն:

2. Լսեցին. - Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքների ներկայացման և առաջարկների քննարկման մասին /Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:

Ա. Սարիբեկյանը ներկայացրեց Ֆինանսներ /ըստ ոլրոտի/ աշխատանքային խմբի կողմից կատարված աշխատանքները: Նա նշեց, որ ձևավորված աշխատանքային խումբը իրականացրել է որոշակի փոփոխություններ կրթական ծրագրում. մասնավորապես փոփոխություններ են կատարվել կամընտրական դասընթացներում: Ա. Սարիբեկյանը ներկայացրեց կատարված բոլոր փոփոխությունները և հավելեց, որ աշխատանքային խմբի համատեղ ջանքերով իրականացվում է իրենց առջև դրված խնդիրները: Նա նշեց նաև, որ գործող կրթական ծրագրի մրցունակության շնորհիվ է, որ տվյալ մասնագիտությամբ արդեն ունենք ուսանողների մեծ հոսք, ինչն էլ հնարավորություն կտա մրցունակ կադրերի պատրաստմանը:

Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց Զբոսաշրջություն կրթական ծրագրի վերանայման աշխատանքային խմբի կողմից իրականացված աշխատանքը, որպես հաջողություն հաղորդեց հանդիպումը արտաքին շահակիցների հետ: Նա նշեց, որ առաջիկայում ծրագրված է նաև համատեղ հանդիպում ուսանողների և արտաքին շահակիցների հետ:

Արտահայտվեցին. - Մ. Միքայլյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24. 2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Հաստատել «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից ներկայացված առաջարկները:

3. Լսեցին. - Հաղորդում ամբիոններում II կիսամյակի դասընթացների փաթեթների առկայության և վերանայման ընթացքի մասին: /Զեկ. Մ. Միքայելյան,Գ. Հովհաննիսյան/:

Մ. Միքայելյանը նշեց, որ ընդհանուր տնտեսագիտության ամբիոնում դասընթացներից մեծ մասի փաթեթները առկա են, մի քանի դասընթացներ կան որոնց փաթեթները ընթացքի մեջ են։

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ զբոսաշրջություն ամբիոնում դասընթացների փաթեթները գրեթե բոլոր դասընթացների գծով առկա են։ Սակայն հավելեց, որ դասընթացների ծրագրերը հաճախ լինում են առավել կիրառելի, քան դասընթացների փաթեթները։ Նա նշեց, որ դասընթացի փաթեթի դետալացումը բավականին բարդ է, իսկ գրագետ կազմված դասընթացի ծրագիրը ներառում է այն բոլոր գործընթացները, որոնք անհրաժեշտ են իրականացնել դասընթացի շրջանակներում։

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Հաղորդումը ամբիոններում II կիսամյակի դասընթացների փաթեթների առկայության և վերանայման ընթացքի մասին ընդունել ի գիտություն։

4. Լսեցին. - Ֆակուլտետի 2021-2025 և 2021-2026 ուստարիների ուսումնական պլանների հաստատման մասին / Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/։

Մ. Միքայելյանը ներկայացրեց 2021-2025, 2021-2026/ՀՈՒԲ/ Բակալավրիատի ուսումնական պլանները», որը կազմվել է 2020 – 2024, 2020-2025/ՀՈՒԲ/ ուսումնական պլանների հիման վրա, որոշակի փոփոխություններով։ Փոփոխությունները կատարվել են դասախոսական անձնակազմի, ուսանողների հետ քննարկումների, բեչմարկինգի, հետազոտական բաղադրիչի ներդրման և «Բակալավրիատի ուսումնական պլան»- ին ներկայացվող նորմատիվների հիման վրա։ Նա նշեց, որ այդ փոփոխությունները կբարելավեն ուսման որակը և կնպաստեն ուսանողների հետաքրքրվածությանը դեպի մասնագիտությունը։

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ «Զբոսաշրջություն» մասնագիտության 2021-2025, 2021-2026/ՀՈՒԲ /ուսումնական պլանները ձևավորվել է 2020-2024, 2020-2025/ՀՈՒԲ/ ուսումնական պլանների հիման վրա։ Գ. Հովհաննիսյանը նշեց, որ կան դասընթացներ, որոնք դեռ քննարկման փուլում են։ Նա նշեց, որ հետազոտական բաղադրիչի ներդրման առաջին փորձը ցույց տվեց և դրական, և բացասական կողմերը, այդ իսկ պատճառով ուսումնական պլաններում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ։

Նրանք նշեցին, որ առկա ուսումնական պլանի փոփոխությունները կհանգեցնի նաև հեռակա ուսուցմամբ ուսումնական պլանի վերանայման։

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.9 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին - Հաստատել ֆակուլտետի «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների 2021-2025 և 2021-2026/ՀՈՒԲ/ ուստարվա ուսումնական պլանների նախագծերը և ներկայացնել մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:

5. Լսեցին. - Հաղորդում ավարտական կուրսերի քննաշրջանի կազմակերպման վերաբերյալ և քննաշրջանի գրաֆիկի հաստատման մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը նշեց, որ ֆակուլտետում ավարտական կուրսերը երկուսն են. «Ֆինանսներ» ԿԾ՝ 17 ուսանող, «Զբոսաշրջություն» ԿԾ՝ 6 ուսանող: Երկրորդ կիսամյակում դասավանդվել է 3 դասընթաց, «Զբոսաշրջություն» ԿԾ 4-րդ կուրսը իրականացրել է նաև արտադրական պրակտիկա: Դասապրոցեսը իրականացվել է և լսարանային և հեռավար տարբերակներով: Քննաշրջանը կազմակերպվելու է ս/թ ապրիլի 3-10 ընկած ժամանակահատվածում /ավարտական կուրսերի քննաշրջանի գրաֆիկը կցվում է /:

Նա նշեց նաև, որ կազմակերպման ձևի վերաբերյալ /հեռավար կամ լսարնային/ հստակ մոտեցում չկա՝ պայմանավորված համավարակով: Սակայն ֆակուլտետը պատրաստ է կազմակերպել քննաշրջանը երկու տարբերակով էլ:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Հաստատել ավարտական կուրսերի քննաշրջանի գրաֆիկը:

Որոշեցին. - Հաղորդումը ավարտական կուրսերի քննաշրջանի կազմակերպման վերաբերյալ ընդունել ի գիտություն:

6. Լսեցին. - Հաղորդում II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին /Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը հաղորդեց II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին, մասնավորապես նշելով, II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունները և ստուգումները նախատեսվում է կազմակերպել ս/թ ապրիլի 5-10 ընկած ժամանակահատվածում:

Համապատասխան ամբիոնները նախապես հստակեցրել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ձևերը և սահմանված ժամկետներում պահանջել են տոմսերը, թեստերի նմուշները: Կազմվել է նաև ժամանակացույցերը /կցվում է/: Դեկանի պաշտոնակատարը, առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների անցկացման առկա կամ հեռավար ձևաչափի մասին հաղորդեց, որ կիրականացվի համատեղ որոշման արդյունքում:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24. 2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Հաստատել II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցերը:

Որոշեցին. - Հաղորդումը II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին ընդունել ի գիտություն:

7. Ընթացիկ հարցեր.

7.1. Լսեցին. - Ֆակուլտետի «Ընդհանուր տնտեսագիտություն» ու «Տուրիզմի կառավարում և մշակութաբանություն» ամբիոնների 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանների հաստատման մասին /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:

Ամբիոնի վարիչները ներկայացրեցին ամբոնների 2020-2021ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանները: Նրանք նշեցին, որ ամբիոնների աշխատանքային պլանները բխում են ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագրից, Տնտեսագիտության ֆակուլտետի աշխանտանքային պլանից: Միաժամանակ հաղորդելով, որ որոշ ծրագրերի իրականացումը ենթադրում է ֆինանսական միջոցների առկայություն /պլանները կցվում են/:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24. 2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշում. - Հաստատել Տնտեսագիտություն Ֆակուլտետի «Ընդհանուր տնտեսագիտություն» ու «Տուրիզմի կառավարում և մշակութաբանություն» ամբիոնների 2020-2021ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանները:

7.2. Լսեցին. - «Ֆինանսներ» /ըստ ոլորտի/ և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի ղեկավարների 2020-2021ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանների հաստատման մասին / Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:

«Ֆինանսներ» /ըստ ոլորտի/ և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի ղեկավարները ներկայացրեցին 2020-2021ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանը: Նրանք նշեցին, որ ամբիոնի վարիչների և կրթական ծրագրի ղեկավարների համագործակցումը հանգեցնում է ամբիոնի աշխատանքների բարելավմանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշում. - Հաստատել «Ֆինանսներ» /ըստ ոլորտի/ և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի ղեկավարների 2020-2021ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանները:

Գիտական խորհրդի նախագահ՝ *Գ. Ավետիսյան*
Քարտուղար՝ *Ա. Ալեքսանյան*